ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 364 - Ա **21 հունիսի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 100% ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՋՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի <ժբ> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 և 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշումների պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական ընկերությունների 2015 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով, 2016 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե տարեկան շահութաբաժինների վճարման չափի վերաբերյալ առաջարկությունները՝ համաձայն հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի առողջապահական ընկերությունների 2015 թվականի տարեկան տնտեսական գործունեության արդյունքներով զուտ շահույթի բաշխման ուղղությունների վերաբերյալ նախահաշիվները:

2. Հանձնարարել՝

1) հավելվածում՝ տեղեկանքում, ընդգրկված կազմակերպությունների տնօրեններին՝ շահութաբաժնների գումարները սեղմ ժամկետում, բայց ոչ ուշ, քան մինչև 2016 թվականի հոկտեմբերի 1-ը փոխանցել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի 900005200440 հաշվին.

2) մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչությանը (պետ՝ Յուրա Մուշեղյանին)՝ կազմակերպությունների 2015 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով 2016 թվականին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի և զուտ շահույթի բաշխման ուղղությունների նախահաշիվների վերաբերյալ ընդհանուր ժողովի որոշման քաղվածքը 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Արտաշես Նիկոյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ԱՎԱԳՅԱՆ

Հավելված

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համակարգի առևտրային կազմակերպությունների 2015 թ.գործունեության արդյունքներով ՀՀ 2016թ. պետական բյուջե տարեկան շահութաբաժին վճարելու առաջարկությունների մասին
(համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարության հետ)

Հ/Հ	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի համակարգի կազմակերպության անվանումը	ՀՀ 2016թ. պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժնի գումարը՝ ըստ կանոնադրական կապիտալում պետության բաժնեմասի (ՀՀ դրամ)
1	«Ակունքի ԱԱՊԿ»	3,000.00
2	«Աստղաձորի ԱԱՊԿ»	17,000.00
3	«Գանձակի ԱԱՊԿ»	4,000.00
4	«Գավառի բժշկական կենտրոն»	304,350.00
5	«Գավառի պոլիկլինիկա»	1,360,000.00
6	«Գեղամասարի ԱԱՊԿ»	189,000.00
7	«Գեղհովիտի ԱԱՊԿ»	17,500.00
8	«Դդմաշենի ԲԱ»	11,000.00
9	«Դպրաբակի ԲԱ»	56,500.00
10	«Երանոսի ԲԱ»	160,000.00
11	«Զոլաքարի ԲԱ»	9,000.00
12	«Լիճքի ԱԱՊԿ»	42,000.00
13	«Լճափի ԱԱՊԿ»	6,500.00

14	«Լուսակունքի ԱԱՊԿ»	14,500.00
15	«Ծակքարի ԱԱՊԿ»	13,000.00
16	«Ծովակի ԱԱՊԿ»	52,000.00
17	«Ծովասարի ԱԱՊԿ»	56,000.00
18	«Ծովինարի ԱԱՊԿ»	14,000.00
19	«Կարճաղբյուրի ԱԱՊԿ»	2,500.00
20	«Կարմիրի ԲԱ»	2,000.00
21	«Ճամբարակի ԱԿ»	1,162,500.00
22	«Մարտունու բժշկական կենտրոն»	1,637,650.00
23	«Մարտունու Ծննդատուն»	2,299,550.00
24	«Մեծ Մասրիկի ԱԱՊԿ»	61,000.00
25	«Սարուխանի ԲԱ»	2,851,000.00
26	«Սևանի պոլիկլինիկա»	2,494,000.00
27	«Վերին Գետաշենի ԲԱ»	6,500.00
28	«Վաղաշենի ԱԱՊԿ»	20,000.00
29	«Վարդաձորի ԱԱՊԿ»	12,000.00
30	«Վարդենիկի ԱԿ»	2,400.00
31	«Վարդենիսի հիվանդանոց»	465,900.00
32	«Վարդենիսի պոլիկլինիկա»	216,500.00
33	«Վարդենիսի ստոմատոլոգիական պոլիկլինիկա»	45,000.00